



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019 թ.

«Իրավունքի զարգացման և պաշտպանության  
հիմնադրամի» տնօրեն Գենյա Պետրոսյանին

Ձեր 30.11.2019թ. հարցմանը.

Հարգելի պարոն Պետրոսյան.

Տեղեկատվական հարցման 1-6-րդ կետերի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ՀՀ Լոռու մարզպետարանում գաղտնի տեղեկատվությունը մշակվում, գաղտնագրվում, պահպանվում և գաղտնազերծվում է համաձայն ՀՀ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի, ՀՀ Կառավարության 13.03.1998թ. թիվ 173 և ՀՀ Կառավարության 29.10.1998թ. թիվ 665 որոշումների դրույթների, սահմանված կարգով և սահմանված ժամկետներում, որոնց վերաբերյալ, ինչպես նախորդ գրությամբ տեղեկացրել էինք, օրենքի պահանջներից ելնելով, Ձեզ չենք կարող տեղեկատվություն տրամադրել:

Ինչ վերաբերվում է Ձեր հարցմամբ հայցվող մյուս կետերին, ներկայացնում եմ տեղեկատվություն դրանց վերաբերյալ.

7-րդ կետ. Մարզպետարանի տարեկան բյուջեն 2011 թվականից սկսած տեղադրված է մարզպետարանի կայքի «Մարզպետարան» բաժնի «Բյուջե» ենթաբաժնում:

Տարեկան բյուջեն տեղադրված է բյուջեի համար սահմանված ձևաչափով՝ աղյուսակի տեսքով՝ ըստ տնտեսագիտական հոդվածների և եռամսյակների:

8-րդ կետ. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը նույնպես 2011 թվականից սկսած տեղադրված է մարզպետարանի կայքի «Մարզպետարան» բաժնի «Բյուջե» ենթաբաժնում: Տեղադրված է տարեկան հաշվետվության համար սահմանված ձևաչափով, որտեղ ըստ տնտեսագիտական հոդվածների արտացոլված է նախատեսված, ֆինանսավորված, դրամարկղային և փաստացի կատարված ծախսերը:

9-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ պահանջվող տեղեկատվությունը գետեղված է Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքէջում, հետևյալ հղումով՝ <http://lori.mtad.am/vijakagrutyun/> :

10-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ նշված ժամանակահատվածում ստացված բոլոր հարցումներին պատասխանվել է սահմանված 5-օրյա ժամկետում:

11-րդ կետ. ՀՀ Լոռու մարզում գործում է Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողով, որի կազմի մեծաթիվ անդամներ

ներկայացված են Հասարակական կազմակերպություններից /մասնավորապես՝ «Լիարժեք կյանք» ՀԿ, «Սպիտակ բազե» ԲՀԿ, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ, Հայաստանի կույրերի կազմակերպության Լոռու մարզի վարչություն, «Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ, «Լուսաստղ» ԲՀԿ, «Խաչվող ուղիներ» ՍՀԿ, «Արան» հաշմանդամների ՀԿ, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, «Օրրան» ԲՀԿ-ի «Գրիգորյան կենտրոն», «Արգինա» ՀԿ, «Մանկական կենտրոն» ԲՀԿ, «Երուսաղեմի սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամ, «Մոլորակ» ՄԼՀԿ/։ Նշված բոլոր կազմակերպությունները անմիջական աշխատանքներ են կատարում շահառուների հետ և բարձրաձայնում օրախնդիր հարցերը, նրանց գործունեությունը անմիջականորեն առնչվում է հաշմանդամության հիմնախնդրին։ Գրության մեջ նշված տեսողական և լսողական խնդիրներ ունեցող շահառուները գիտեն Հանձնաժողովի գոյության մասին, իրենց պատվիրակների /«Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ նախագահ Գագիկ Սերոբյան, Հայաստանի կույրերի կազմակերպության Լոռու մարզի վարչություն՝ Հովիկ Ծատուրյան/ միջոցով բարձրաձայնում են իրենց խնդիրները, որոնք քննարկվում և հնարավորինս լուծում են ստանում մարզպետարանի աշխատակազմում։

Հարգանքով՝

 Invalid signature



ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ